ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԶՄԲ վարկ 8572-AM

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 4
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ 18

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) ղեկավարությունը պատասխանատու է 23.02.2016թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8572-AM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) "Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր" (Ծրագիր) 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի (ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք) և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց):

Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 31.12.2022թ.-ի վերաբերյալ:

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունքի և ՀԲ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ՀԲ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են,
- Վարել Նպատակային հաշիվները համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների,
- Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք բերել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների, և
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են ՀՏԶՀ ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին:

Մարգիս Բաղինյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Գլխավոր ֆինանսիստ

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անիադեի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 23.02.2016թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8572-AM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունք) և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:
Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունք

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունքի և ՀԲ ուղեցույցի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

BDO

Հեռ. +37460 528899
Էլ. փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրերի պահանջների պահպանման նպատակով, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի: ՀՏՁՀ-ի կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Նպատակային հաշիվները վարվել են համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՏՁՀ-ի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
Հունիսի 28, 2023թ.

Վահագն Սահակյան, ՖԳՏ
Տնօրեն

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8572-AM
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Հոդվածներ	Ծնթ.	Փաստացի				Նախատեսված		Շեղում
		31.12.2021 ավարտված տարի	31.12.2022 ավարտված տարի	Ամողական առ 31.12.2022		Ամողական առ 31.12.2022		Ամողական առ 31.12.2022
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	6	**84,056**	**1,378,308**	**-**				
Ֆոնդերի աղբյուրներ	9							
ՎԶՄԲ վարկ 8572-AM		6,039,642	2,992,875	17,164,937				
ՀՀ Կառավարության համաֆինասավորում		1,183,734	949,603	4,113,568				
Ընդամենը		**7,223,376**	**3,942,478**	**21,278,505**				
Ֆոնդերի օգտագործում	10							
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով		5,838,246	4,733,877	20,202,725		20,625,989		423,264
(2) Գործառնական ծախսեր		103,752	106,300	458,100		472,500		14,400
(4) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 3-ի գծով		-	-	-		-		-
Նախնական վճար		-	-	137,500		137,500		-
Ընդամենը		**5,941,998**	**4,840,177**	**20,798,325**		**21,235,989**		**437,664**
Արտարժույթի տարբերությունից կորուստ		**12,874**	**20,266**	**20,695**				
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	**6**	**1,378,308**	**500,875**	**500,875**				

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Սարգիս Բաղինյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Գլխավոր ֆինանսիստ

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

ՎՀՄԲ վարկ 8572-AM

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

ԱՄՆ դոլար

Ծրագրի բաղադրիչներ	Actual				Նախատեսված		Շեղում
	31.12.2021 ավարտված տարի	31.12.2022 ավարտված տարի	Ամբողջական առ 31.12.2022		Ամբողջական առ 31.12.2022		Cumulative as at 31.12.2022
Մաս 1. Մշակույթային ժառանգության կենտրոնների վերածնունդ և զբոսաշրջության երթուղիների զարգացում	**5,941,998**	**4,716,047**	**20,536,695**		**20,421,978**		**(114,717)**
1. ա. Ժառանգության կենտրոնների վերականգնում	-	-	-		-		-
1. բ. Զբոսաշրջության երթուղիների զարգացում	5,458,163	3,980,994	18,680,522		18,811,095		130,573
1. գ. Հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով	-	-	-		-		-
1. դ. Ծրագրի կառավարում, նախագծում և շինարարության վերահսկում	483,835	735,053	1,856,173		1,610,883		(245,290)
Մաս 2. Ինստիտուցիոնալ զարգացում	-	124,130	124,130		676,511		552,381
Մաս 3. Արտակարգ իրավիճակներին շտապ արձագանքում	-	-	-		-		-
Նախնական վճար	-	-	137,500		137,500		-
Total	**5,941,998**	**4,840,177**	**20,798,325**		**21,235,989**		**437,664**

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Սարգիս Բաղինյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Գլխավոր ֆինանսիստ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8572-AM
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Համաձայն 2016թ. փետրվարի 23-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված 8572-AM վարկային համաձայնագրի՝ ՎԶՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 55,000,000 USD (ԱՄՆ դոլար) գումար:
Վարկը տրամադրվել է իրականացնելու «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը» (Ծրագիր):
Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 29.12.2016թ.-ին:

Ակնկալվում էր, որ Ծրագիրը կավարտվի մինչև 2021 թվականը, իսկ ՎԶՄԲ վարկի համար 8572-AM ֆինանսավորման ավարտի ամսաթիվը սահմանվել էր 2021 թվականի ապրիլի 30-ը: 2020 թվականին Ծրագրի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2023 թվականի մարտի 31-ը: 2022 թվականին Ծրագրի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վարկային միջոցների մասհանման հասանելիության վերջնաժամկետը սահմանված է Ծրագրի իրականացման ավարտից հետո 4 ամիս (30.04.2025-ից հետո):

2020 թվականի սկզբից ի վեր Հայաստանի Հանրապետության առաջ ծառացած անկանխատեսելի մարտահրավերներից ելնելով, ՀՀ Կառավարությունը սկսել է գործընթաց՝ արտաքին ֆինանսավորումները ներգրավել ըստ ոլորտային առաջնահերթության առավել անհրաժեշտ ծրագրերի և բարեփոխումների իրականացման համար: Այդ նպատակով ՀՀ Ֆինանսների նախարարը 2020թ. հուլիսի 3-ին և 2021թ. օգոստոսի 12-ին դիմել է Համաշխարհային Բանկ, Հայաստանի Հանրապետության և ՎԶՄԲ-ի միջև կնքված 8572-AM վարկային միջոցներից համապատասխանաբար 3,200,000 և 9,000,000 ԱՄՆ դոլար չեղարկելու վերաբերյալ: Արդյունքում ծրագրի իրականացման համար նախատեսված վարկային միջոցները կրճատվել են 12,200,000 ԱՄՆ դոլարով: ՎԶՄԲ 8572-AM վարկի գումարը կազմում է 48,200,000 ԱՄՆ դոլար:

1.2 Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները՝ Հայաստանի ընտրված տարածաշրջաններում տեղական տնտեսության մեջ զբոսաշրջային ոլորտից ստացվող աջակցության ավելացման համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս 1. Մշակութային ժառանգության կենտրոնների վերականգնում և զբոսաշրջության երթուղիների զարգացում
ա) Ներդրումային ենթածրագրի ֆինանսավորման տրամադրում մասնակից շահառուներին քաղաքային վերականգնման աշխատանքների իրականացումը ֆինանսավորելու համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, հանրային ենթակառուցվածքների, շենքերի ճակատային մասերի և տանիքների, հանրային տարածքների, թանգարանների, մերձատար ճանապարհների, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի և փողոցների լուսավորության վերականգնմամբ:
բ) Ներդրումային ենթածրագրի ֆինանսավորման տրամադրում մասնակից շահառուներին մշակութային ժառանգության պահպանության և տեղանքի կառավարման բարելավման աշխատանքների ֆինանսավորման համար, որոնք, ի թիվս այլոց, կարող են ներառել. (i) այցելավայրերի կառավարման պլանների վերաբերյալ առաջարկությունների իրականացում, (ii) այցելուի համար նախատեսված օբյեկտների կառուցում՝ տեղեկատվական կենտրոններով, սրճարաններով, հանրային զուգարաններով և անվտանգ կայանատեղիով, (iii) մշակութային

ժառանգության հուշարձանների, թանգարանների և հարակից տների պահպանում, և (iv) մերձատար ճանապարհների և հանրային ենթակառուցվածքների հետ կապի բարելավում:
գ) Հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով՝ աջակցել Ծրագրի վայրերում ընտրված՝ զբոսաշրջության մեջ կամ ագրոբիզնեսում ներդրումներ կատարելու պատրաստ մասնավոր հատվածի անձանց, կոմպլեմենտար հանրային ենթակառուցվածք ներդնելու միջոցով:
դ) Ծրագրի կառավարում, նախագծում և շինարարության վերահսկում:

Մաս 2. Ինստիտուցիոնալ զարգացում

Այս բաղադրիչով կբարձրացվի Հայաստանի Էկոնոմիկայի նախարարության Տուրիզմի կոմիտեի, Ծրագիրն իրականացնող գրասենյակի, տեղական և տարածաշրջանային այլ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունները:

Մաս 3. Արտակարգ իրավիճակներին շտապ արձագանքում

Անհրաժեշտության դեպքում աջակցության ցուցաբերում համապատասխան արտակարգ իրավիճակների առաջացման դեպքումBudget

1.3 Բյուջե

Ծրագիրը ֆինանսավորվում է.

- ՎԶՄԲ 8572-AM վարկով,
- ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ,

Ծախսային հոդվածներ	ՎԶՄԲ 8572-AM վարկ			ՀՀ Կառավարություն	Ընդամենը	Վարկով ֆինանսավորվող մասնաբաժին (ներառյալ հարկերը)
	Սկզբնական USD	Չեղարկված USD	Վերանայված USD	USD համարժեք	USD համարժեք	
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով	53,962,500	(12,200,000)	41,762,500	10,440,625	52,203,125	80%
(2) Գործառնական ծախսեր	900,000	-	900,000	225,000	1,125,000	80%
(3) Նախնական վճար	137,500	-	137,500	-	137,500	100%
(4) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 3-ի գծով	-	-	-	-	-	-
Ընդամենը	**55,000,000**	**(12,200,000)**	**42,800,000**	**10,665,625**	**53,465,625**	

1.4 Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից, (նախկինում անվանվում էր Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ (ՀՍՆՀ)), համաձայն ՎԶՄԲ-ի և ՀՍՆՀ-ի միջև 23.02.2016թ.-ին ստորագրված Ծրագրի Համաձայնագրի:

ՀՍՆՀ-ը հիմնադրվել է միակ հիմնադիր Հայաստանի Հանրապետության Կառավարության 11.04.2000թ. N 162 որոշումով՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքի նախաձեռնության և պահանջարկի հիման վրա գործունեության միջոցով փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը աջակցման համար:

ՀՏԶՀ-ն իրականացնում է ՀԲ-ի և այլ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր՝ նպաստելով.

- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Հոգաբարձուների Խորհուրդը ՀՏԶՀ-ի բարձրագույն կառավարման մարմինն է:
ՀՏԶՀ-ի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի՝ «RM 3 - Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի (մարտ 2010) համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունք

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են, կիրառելով հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամային միջոցների սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:
Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:
ՀՀ դրամով իրականացված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է.

- Մուտքերի համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված Գործարքի օրվա դրությամբ արտարժույթի առքի փոխարժեքը:
- Ելքագրվող գումարների համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի վաճառքի փոխարժեքը:

2.5 Ծրագրի բյուջե

Ֆինանսավորման և ծախսումների տարեկան բյուջեները հիմնված են ծրագրի համաձայնագրի հաստատված բյուջեի վրա (ծնթ. 1.3):
Ծախսումների բյուջեն ստեղծվել է վերջին ժամանակահատվածի փաստացի կուտակված ծախսերի հիման վրա՝ գումարած տվյալ ժամանակահատվածի փոփոխված գնումների պլանը:

2.6 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Վարկային միջոցների առհանումների հաշվետվություն (SOE և SUMMARY SHEET)

ՎԶՄԲ վարկ 8572-AM

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ամսաթիվը	Ծախսային հոդվածներ		Ընդամենը
		(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով	(2) Գործառնական ծախսեր	
29	11/02/2022	301,970	19,722	**321,692**
30	31/03/2022	77,216	12,731	**89,947**
31	27/06/2022	539,636	17,835	**557,471**
32	25/08/2022	696,918	14,690	**711,608**
33	13/10/2022	326,064	4,369	**330,433**
34	01/12/2022	662,198	9,308	**671,506**
35	22/12/2022	303,023	7,195	**310,218**
Ընդամենը		**2,907,025**	**85,850**	**2,992,875**

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Ֆոնդ	ՎԶՄԲ վարկ 8572-AM
Հաշվեհամար	900000902818
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան փ. 1,
Արժույթ	ԱՄՆ դոլար

	31.12.2022թ. ավարտված տարի ԱՄՆ դոլար
1. Սկզբնական մնացորդ	1,378,308
2. *Ավելացում.* Սկզբնական տարբերություն	-
3. ՀԲ ֆոնդի կանխավճար/համալրում	2,992,875
4. *Նվազեցում.* նպատակային հաշվից վերադարձ ՀԲ-ին	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարը	**4,371,183**
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդն	500,857
7. *Ավելացում.* վճարված ընդունելի ծախսերի գումար	3,870,326
8. *Նվազեցում.* Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	**4,371,183**
10. Վերջնական տարբերություն (5)-(9)	

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը բացահայտում է Ծրագրի ակտիվները, պարտավորությունները և զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված է հաշվեգրման հիմունքով, համաձայն որի՝ գործարքները ճանաչվում են, երբ տեղի են ունենում (այլ ոչ միայն, երբ դրամական միջոցները ստացվում կամ վճարվում են):

	Ծնթ	31.12.2022 ԱՄՆ դոլար	31.12.2021 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	6	500,875	1,378,308
Կանխավճարներ	7	1,122,964	1,822,085
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,623,839**	**3,200,393**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վճարվելիք գումարներ	8	233,208	226,549
Ընդամենը պարտավորություններ		**233,208**	**226,549**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎ			
Աճողական եկամուտ			
Ֆոնդեր	9		
ՎԶՄԲ 8572-AM		17,164,937	14,172,062
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում		4,113,568	3,163,965
Ընդամենը ֆոնդեր		**21,278,505**	**17,336,027**
Աճողական ծախսեր			
Ծրագրի ծախսեր	10	(19,908,569)	(14,362,612)
		(19,908,569)	**(14,362,612)**
Արտարժույթի տարբերությունից օգուտ/(կորուստ)		**20,695**	**429**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,390,631**	**2,973,844**

6. Դրամական միջոցներ

Հաշիվ	Բանկ	Արժույթ	31.12.2022 ԱՄՆ դոլար	31.12.2021 ԱՄՆ դոլար
Նպատակային հաշիվ (ՎԶՄԲ 8572-AM)	Գանձապե-տարան	ԱՄՆ դոլար	500,857	1,378,308
Կառավարություն	Գանձապե-տարան	ՀՀ դրամ	18	-
			500,875	**1,378,308**

7. Կանխավճարներ

	31.12.2022 ԱՄՆ դոլար	31.12.2021 ԱՄՆ դոլար
Կանխավճարներ աշխատանքների գծով*	1,122,964	1,822,085
	1,122,964	**1,822,085**

(*) Մինչև 20% կանխավճար տրամադրվում է շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին՝ համապատասխան բանկային երաշխիքների ստացման դեպքում:

8. Վճարվելիք գումարներ

	31.12.2022 ԱՄՆ դոլար	31.12.2021 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով (պահումներ)*	233.208	226,549
	233,208	**226,549**

(*) Պահումները կատարվում են աշխատանքների դիմաց դուրս գրված հաշիվների 5%-ի չափով որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք, որից 2.5%-ը վճարվում է աշխատանքների ավարտական ակտը ստորագրելուց հետո, իսկ մնացած 2.5%-ը պահվում է մինչև մեկ տարի ժամկետով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք կամ վճարվում է մեկ տարի ժամկետ ունեցող բանկային երաշխիքի հիման վրա:

9. Ֆոնդեր

9.1. ՎՋՄԲ 8572-AM վարկ

	31.12.2021թ. ավարտված տարի ԱՄՆ դոլար	31.12.2022թ. ավարտված տարի ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2022թ. ԱՄՆ դոլար
Կանխավճար	-	-	1,700,000
SOE ընթացակարգեր, Առհանումների հաշվետվություններ	6,039,642	2,992,875	15,327,437
Նախնական վճար	-	-	137,500
Ընդամենը	**6,039,642**	**2,992,875**	**17,164,937**
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի			**42,800,000**
Հատկացված ֆինանսավորման տոկոսը			**40%**

9.2. ՀՀ Կառավարության համաֆինանսավորում

	31.12.2021թ. ավարտված տարի ԱՄՆ դոլար	31.12.2022թ. ավարտված տարի ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2022թ. ԱՄՆ դոլար
Ներդրումներ դրամական միջոցներով	1,183,734	949,603	4,113,568
Ընդամենը	**1,183,734**	**949,603**	**4,113,568**
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի			**10,665,625**
Հատկացված ֆինանսավորման տոկոսը			**39%**

10. Ծրագրի կուտակային ծախսեր

10.1. Ծրագրի ծախսումները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հոդված	31.12.2022թ.-ին ավարտված տարի		Ընդամենը (ԱՄՆ դոլար)
	ՎԶՄԲ 8572-AM վարկ	ՀՀ Կառավարություն	
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով	3,786,927	946,950	**4,733,877**
(2) Գործառնական ծախսեր	83,399	22,901	**106,300**
(4) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 3-ի գծով	-	-	-
Նախնական վճար	-	-	-
Ընդամենը	**3,870,326**	**969,851**	**4,840,177**

Հոդված	Կուտակային առ 31.12.2022թ.		Ընդամենը (ԱՄՆ դոլար)
	ՎԶՄԲ 8572-AM վարկ	ՀՀ Կառավարություն	
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով	16,161,736	4,040,989	**20,202,725**
(2) Գործառնական ծախսեր	364,839	93,261	**458,100**
(4) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 3-ի գծով	-	-	-
Նախնական վճար	137,500	-	**137,500**
Ընդամենը	**16,664,075**	**4,134,250**	**20,798,325**

10.2 Ծրագրի բյուջեի կատարում

Հոդված	Կուտակային առ 31.12.2021թ.	Բյուջե	Կատարում
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով	20,202,725	52,203,125	39%
(2) Գործառնական ծախսեր	458,100	1,125,000	41%
(4) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս 3-ի գծով	-	-	-
Նախնական վճար	137,500	137,500	100%
Ընդամենը	**20,798,325**	**53,465,625**	**39%**

(*) Վարկային պայմանագիրը ստորագրվել է 2016 թվականի փետրվարի 23-ին, վարկի տրամադրման վերջնաժամկետը սահմանվել է 2021 թվականի ապրիլի 30-ը, այնուհետև երկարաձգվել է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը (Ծանոթագրություն 1.1): 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կուտակային ծախսերը կազմում էին ընդհանուր բյուջեի 39%-ը (31.12.2021թ.՝ 30%):
Ծրագրի իրականացման դանդաղ ընթացքը պայմանավորված է՝ COVID-19 համաճարակով և Ղարաբաղյան պատերազմով, որին մեր երկիրը բախվել է 2020 թվականի սկզբից, ինչի հետևանքով շինարարական աշխատանքները հետաձգվել են:
Ժամանակատար գործընթաց է նաև շինարարական նախագծերի թարմացումը, որոնք չեն սկսվել մինչև քաղաքապետարանի այլ նախագծերի ավարտը:
Ծրագրերի մրցութային գործընթացների մեծ մասը ներկայումս ավարտված է, շինարարական ընկերությունները ընտրվել են :

11. Հաշվետու ամսաթվից հետո դեպքեր

Հաշվետու ժամանակահատվածին վերաբերող 1,199,137 ԱՄՆ դոլար ծախսումներ ներառող N36 առհանման դիմումը ներկայացվել է ՀԲ-ին 06.02.2023.-ին և հաստատվել՝ 09.02.2023թ.-ին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
ՎՁՄԲ վարկ 8572-AM
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծախսային հոդված	Դիմում	ՀՏՁՀ	ՀԲ	Տարբերություն
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս 1-ի և Մաս 2-ի գծով	29	301,970	301,970	-
	30	77,216	77,216	-
	31	539,636	539,636	-
	32	696,918	696,918	-
	33	326,064	326,064	-
	34	662,198	662,198	-
	35	303,023	303,023	-
		2,907,025	**2,907,025**	**-**
(2) Գործառնական ծախսեր	29	19,722	19,722	-
	30	12,731	12,731	-
	31	17,835	17,835	-
	32	14,690	14,690	-
	33	4,369	4,369	-
	34	9,308	9,308	-
	35	7,195	7,195	-
		85,850	**85,850**	-
Ընդամենը		**2,992,875**	**2,992,875**	**-**